**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ**

# Հ Ր Ա Մ Ա Ն Ք

«26» ապրիլի 2019 թվականի N 88-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-ի №34-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի №699-Լ որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության կանոնադրության 18-րդ կետի 21-րդ ենթակետը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի 26.04.2019թ. №01/06/1692-19 գրությունը՝ Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 19-ի N 34-Ա հրամանում փոփոխություն կատարելու անհրաժեշտության վերաբերյալ.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի 2019 թվականի փետրվարի 19-ի «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին 2019 թվականի ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակները՝ ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների հաստատելու մասին» №34-Ա հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱՐԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

ՀԱԿՈԲ ՎԱՐԴԱՆՅԱՆ

4/26/2019

X

VERIFIED OCSP 4/26/2019 18:30:24 GMT+4

Signed by: VARDANYAN HAKOB 3914890533

Հավելված
Հայաստանի Հանրապետության էներգետիկ
ենթակառուցվածքների և բնական պաշարների
նախարարի 2019 թվականի
ապրիլի 26-ի N 88-Ա հրամանի

Հավելված
Հայաստանի Հանրապետության էներգետիկ
ենթակառուցվածքների և բնական պաշարների
նախարարի 2019 թվականի
փետրվարի 19-ի N34-Ա հրամանի

## ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ

## ՈՌՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՏՈՒՑՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ՝ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

| Հ/Հ | Անվանումը | Գումարը (հազ. դրամ) |
|---|---|---|
| 1 | «Երևան» ՋՕԸ | 123,364.300 |
| 2 | «Արտաշատ» ՋՕԸ | 762,068.917 |
| 3 | «Արարատ» ՋՕԸ | 303,909.995 |
| 4 | «Արմավիր» ՋՕԸ | 518,755.719 |
| 5 | «Էջմիածին» ՋՕԸ | 758,343.408 |
| 6 | «Շենիկ» ՋՕԸ | 199,708.424 |
| 7 | «Արագածոտն» ՋՕԸ | 175,251.946 |
| 8 | «Թալին» ՋՕԸ | 223,069.566 |
| 9 | «Կոտայք» ՋՕԸ | 118,913.756 |
| 10 | «Գեղարքունիք» ՋՕԸ | 154,374.985 |
| 11 | «Շիրակ» ՋՕԸ | 50,278.875 |
| 12 | «Տավուշ» ՋՕԸ | 100,521.400 |
| 13 | «Լոռի» ՋՕԸ | 35,138.027 |
| 14 | «Եղեգնաձոր» ՋՕԸ | 45,097.889 |
| 15 | «Սյունիք» ՋՕԸ | 67,966.793 |
| **Ընդամենը** | | **3,636,764.000** |